

նօտին, ոչ համարձակեն բարձր ձայնիւ. կամ բանս ընդգէմ նոցա խօսիլ. բայց նշանաւորն ի սոսա և Եւրոպական սովորութիւն մի, զոր չունին աղլ աղլք Առվիասու. այն է, ի ցցց պատուց և մեծարանաց, արք բանան զզբուխս իւրեանց, և երբեմն համբուրեն զձեան հօր կամ այլ պատկասելի անձին. իսկ կանայք յոտին յառնեն եթէ նատեալք իցեն:

Զհայրասովանն պատժեն չարաչար, այն է փակիալ ի տան նորին այրեն զնա. երդնուլ ի զերեզման նախնեաց սուրբ համարի. եթէ կամակոր զրկողն յանձն չառնու տալ որ և իցէ կերպիւ բաւականութիւն զրկեցն, վերջինս սպառնայ չարչարել զհողիս նախնեաց նորա: —

(Մասցեան է յետագոյա)

ԱՐԻԱՏԱԿԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԴՐԱԿԱՆԱՆ.

## ԲԱՆԱՍՏԵՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՈՒՅՈՒՑՉԵՒ ԽՆՔՆԱԿԲԹՈՒԹԻՒՆՔ.

(Է ԷՌԻՆ ՀԱՅՐԵԴԻՆ):

Ի.

Վի ուրիշ հարց, որ մենք խորհուրդ կտայինք ուսուցչին շուտ շուտ կրկնել ինքըն իրան, այն է «ունիմ» ևս արդեօք ոյժ և ընդունակունենա իմ զործիս համար . . . — նոյնպէս կարեւոր է ուսուցչի անձնակիրթութեան, որովհեան այդ հարցը կարող է նորա միտք զցել, թէ ի՞նչ է պահանջում իրանից ուսուցչութիւնը, և ապա ուրիշն կծաղեցնէ նորա մեջ նոնադունեայ պատրաստունենալը իւր սկարտականութիւնները արժանապէս կատարելու համար և կզարթեցնէ նորա մեջ վըճողութիւն որդուն կարելլ է կադարձելադորժութեալը: Մենք ասացինք, որ զորա համար հարկաւոր չէ հինգի միայն անձնական անձնակիրթութեան իւր բոլոր զործողութիւններին — յարաքերութիւններին տայ նա էրեսական բնաւորութիւնն թռող երբէք չմոռանայ ուսուցիչը և այն, որ նա կրթում ու ուսուցանումէ ոչ թէ միայն դասաւան մեջ իւր կարդացած խօսած ու զործածով, այլ կրթումէ նաև ուսուցանում իւր բոլոր կեանքովը, բընաւորութեամբը և առհասարակ զործազրութիւններով, թէ իւր արտաքին կեն-

կ հարկէ մարդիք զանազան ձիբքեր են ունենաւմ. բայց իւր զործին անձնատուր աշխատաւորն առաւել օգաակար զործ կտեսնէ, քան թէ հանձարեզ ծոյլը: Խոռ հական ուղղութիւն ստացած անձնակը թութիւնն իւր կիրկէ նորան թեթեամիտ ինքնահաւանութիւնից, նա այլ ևս չե կանգնիլ իւր յառաջաշարժութեան մեջ և վերջացրած չի համարիլ իւր պատրաստութիւնը, նորա համար էլ մենք խորհուրդ կտանք ուսուցչին շուտ — շուտ մտարերել ուսուցչի կոչուն գաղափարը, մտարերել, թէ ի՞նչ պահանջմանք ու պայմաններ է առաջազրում ուսուցչի էրեւալը:

Կարելի է ցցց տալ նորան զիմելու ձանապարհն ու միջոցները, բայց այդ ձանապարհով գնալ և օգուտ քաղել այդ միջոցներից՝ ուսուցչի իւր պարտքն է:

Ուրիշն թող յաճախ մատածէ ուսուցիչը թէ ի՞նչ է հարկաւոր նորան բատ գաղափարին առաջարկել լիւելու համար: Եյս է սկիզբն անձնակիրթութեան: Ամենից առաջ, թող չմոռանայ ուսուցիչը, որ նորա զործը չէ վերջանում միայն ուսումնաատութեամբ, դա միայն ֆլոցն է, իսկ նպատակն է կենդանի մարդկային անձնաւորութիւն էրեւալը: Թող սւրեմն իւր բոլոր զործողութիւններին — յարաքերութիւններին տայ նա էրեսական բնաւորութիւնն թռող երբէք չմոռանայ ուսուցիչը և այն, որ նա կրթում ու ուսուցանումէ ոչ թէ միայն դասաւան մեջ իւր կարդացած խօսած ու զործածով, այլ կրթումէ նաև ուսուցանում իւր բոլոր կեանքովը, բընաւորութեամբը և առհասարակ զործազրութիւններով, թէ իւր արտաքին կեն-

ցաղավարութեան և թէ իւր ուղղութեան ոգու և հայեցուածների անկատելի արտայայտութիւնների մէջ. ուսուցանում և կրթումէ անկատելի, բայց այնու ամենայնիւ հաստատ կերպով :

Ենչառնունիւնիւնը այս յարարերութեամբ մի անհրաժարելի պարտականութիւն պիտի լինի ուսուցչի համար: Մանկական բնութիւնը դիւրընկալ է, այս պատճառով էլ ուսուցչի օրէնքին նշանակութիւնը մանուկների համար շատ մեծ է:

Կանոնները սովորումեն, իսկ օրինակները՝ քաղվում: այս դաստիարակական փորձառութեան հիմնական դրութիւններից մինն է, որը գեռ հիներին էլ էր յայտնի: Փոքր հասակի մէջ երեխան առաւելապէս զրաւումնորա վերայ անմիջապէս ներգործող տպաւորութիւններով, քան թէ կանոններով: “Կա առաւել նմանագործումէ, քան թէ իրագործում իւր կամքը: Եյս կէտից նայելով՝ ուսուցչի կեանքը մի բաց գիրք է, որ առջից մանուկները առասպական կերպով ուսանում են կեանքը և սորա կանոնները, ուրեմն թող որ չկարդան մանուկները նորա մէջ չար բան: Ուսուցիչը պէտք է առաջընթաց լինի և նորա գործը հակառակ չպէտք է լինի խօսքին: Եյս առջ էլ ուսուցչի կողմից երեխան է գալիս ինքն ըստ ինքեան մի ամբողջ շարք գործունէութիւնների. իւր անձը կտառշելութիւնը համար ուսուցիչ միայն այն կարող է առաջ ինչ որ ինքն ունի: Ծաէ ուղղում է նաև որ աշակերանները ջերմ եռանդով կատարեն իւրեանց գործը, աղնիւ լինին և արդար, — թող առաջ առաջ նա ինքը լինի այդպիսի: Ուսուցչի ծուլութիւնը չի կարող յարող յարուցանել աշակերանների

մէջ ջանասիրութիւն: Իսկ նորա գասեր արհամարհելը՝ չի կարող զօրացնել մանկան մէջ իւր պարտականութիւնն աղնուաբար կատարելու գաղափարը. այդպէս էլ չի զարթնիլ նոցա մէջ հարցասիրութիւն՝ եթէ ուսուցիչն ինքն հեռու է այդբանից: Ինչքան աւելի ուշի ուշով կհսկէ ուսուցիչն իւր անձի վերայ, այնքան կըլաւայնա: Դժուար է միայն մանկամ սկսել այն, նորանից յետոյ գործն ինքն իրան կը հաստատուի և միշտ ու միշտ ընդարձակուելով գեղեցիկ պառւղներ կայ:

Մենք ասացինք, որ ուսուցչի նպատակըն է կրթել, զարգացնել մանկանը իրի բարոյական խոհական անձնաւորութիւն, աւելորդ է կարծեմ ասել, որ այդ նպատակին համար ուսուցիչն ինքն պիտի ունենայ լուրջ կերպով մշակած բարոյական բնաւորութիւն: Եյդպիսի բնաւորութիւնը չի կարելի սաեղծել մանկան մէջ խօստով, ուրիմն ուսուցիչն ինքը պիտի լինի կենդանի պատկերը իւր քարոզած ճշմարտութիւնների: Ուսուցչի մըշտական անձնազնութիւնը բաց կանէ ուցոյց կտայ նորան, որ մանկավարժ մարդու մէջ բարի որակութիւններն անգամ պէտք է ունենան խոհական մանկավարժական հիմքեր, ուրիշ կերպ նոքա մեծ նշանակութիւն էլ չեն կարող ունենալ: Անբցընենք օրինակի համար սէրը, որ է կըրժութեան զօրութեան գաղանիքը (խորհուրդը) և մանկավարժական գործունէութեան բանալին, որ է նորա Եյն ու Քէն. այս զգացումն ինչքան էլ բարձր լիներ, բայց երբ որ թոյլ է լինում, կեղծեալ և անհիմն, երբ պակաս է լինում նորան հաստատակամութիւն ու աշխոյժ, — շատ ան-

գամ վեսակար է լինում դործին։ Օքն-նելով իւր անձն, ուսուցիչը կարող է նր-կատել, որ սէրն էլ պէտք է խոհական լի-նի, իսկ այս խոհականութիւնը կայացած է մանկավարժական գործի հիմունքներն իմանալուն, մանկական բնութեան երևոյթ-ները հասկանալուն վերայ. Ի՞նչ մեծ ըն-դարձակ դաշտ է անձնակրթութեան գոր-ծի համար։ Աշխոյժը և ջերմեռանդու-թիւնն աշխատանքի մէջ գովելի բան են։ Բայց այս տեղ էլ չափաղանցութիւնը շատ անգամ փոխվում է զէպի անկանո-նութիւն և մանկան պատշաճաւոր զար-գացման խանգարումն։ Մանուկների բը-նութիւնը տակաւին անհասատ է լի-նում, մոռացկոտ և փոփոխական։ Նոցա-հետ պարապիլու մէջ համբերութիւնն ու դիմացկոտութիւնը յառաջադիմութեան առաջին և կարեոր պայմաններից մինն է։ Բայց թէ որ ուսուցիչը ցանկանում է կա-տարելապէս ազգել մանկան վերայ, եթէ նա կամենում է մանկավարժաբար կանո-նաւորել իւրաշխոյժն էլ, համբերութիւ-նըն էլ, նա դարձեալ պարտաւոր է լաւ ուսանիլ մանկական բնութիւնը։

Մեր յառաջ բերած օրինակները հե-րիք ենք համարում ցոյց տալու համար, թէ ինչպէս ուսուցչի անձնազնութիւնը իւր գործունեութեան մէջ փոքր առ փոքր կարող է ձգտել նորան զէպի անձնազար-գացումն, բաց անելով նորա առջեւ մի ամ-բողջ ընդարձակ դաշտ, ուսանելու, մշա-կելու համար։ Բայց բաց ի մանկավար-ժական յառաջադիմութիւնից՝ անձնա-զնութիւնը նցն իսկ ուսուցչին էլ հա-սուցանում է անձնական օգուտ, մշակե-լով նորա բարոյական էութիւնը, այդ ոյ-

ժըն է միայն, որ սաեղծում է նորա մէջ ներքին մեծ միութիւն ու միութիւն բը-նութեան և կրթութեան, միութիւն պար-տականութեան և աղնիւ աշխատանքի զուա վայելչութեան, միութիւն զիտու-թեան և կեանքի, իմացութիւնների և գործի. այդ ոյժն է միայն, որ կտայ մար-դուն ներքին հաշտութիւն, կոչնչացնէ ներքին երկպատակութիւնը, կհեռացնէ մինչեւ անգամ ներքին և արտաքին անհա-մաձայնութիւնը։ Այդ դաստիարակական գործի կենդանի աղբեկըն է։ — Ուրեմն, զննեցէք ձեզ, խորամուխ եղեք յաճա-խակի ձեր գործերի մէջ, քննեցէք նոցա-երեսութեանը և ձեր հոգեկան դրութիւնը, որոնեցէք ամեն բանի պատճառը, ամեն բանի հիմքը, — և դուք զադար չեք առ-նել ձեր ինքնազարգացման մէջ։ Ով որ միանգամ սովորել է ապրել մարդկային զիտակից կեանքով, նա ընդ միշտ աղատ կլնի բթամտութիւնից, անշարժութիւ-նից և մեքենայականութիւնից։ Ունեցեք ուրեմն մարդու խոհական կեանք, եղեք ճարդ, եթէ ոչ՝ ձեզ դժուար է ճարդել կրթել։ Զգանցէք զէպի ամբողջ, զէպի գաղափարը, կասեմ ևս էլ Շիլերի հետ, և այդ ձգտումը կշնել ձեզ ազգային կըր-թութեան մեծ գործի ճարատրապետներ։ Նա կյարուցանէ ձեր մէջ այն շարժողու-թիւնը, որ կօժանդակէ ձեր անձի կատա-րելագործութեանը, և ազգային ուսում-նարանի վիրակինդանութեան։

Գ.

Մենք ասացինք, որ ուսուցչի անձնա-կրթութեան զօրել դրդող միջոցներից մինն է նորա ուղղական հոգածունենալուն։

ինուն ս-ը ս-լու զնել։ Այստեղ նշանաւոր է այն բանը, որ ուսուցիչը կարող է և պարտ է սասանիլ ինչն իրան։ այս միտքը, որ առաջին հոյեացքից անկարելի է եր ում՝ իրօք արժանի է ուսուցիչների խորին ուշադրութեանը։ Կաշխատինք բացարել այդ։

Գերմանացի անուանի մանկավարժ Աեհոը իւր զրուածներից մէկի մէջ դառնալով դէպի ուսուցիչները՝ ասում է. «պատրաստուեցէք ձեր դասերին ոչ թէ միայն պարապմունքից տառաջ, այլ և բարեկան այս ինքն նշանակեցէք ձեր բոլոր փորձերը դասի միջոցում։ այս կ'փրկէ ձեզ սրխաներից և կ'հանե ուղիղ, նպատակամերձ ճանապարհի վերայ,։ Ահա ի՞նչ է նշանակում սասանիլ ինչն իրան։ Ճետելով Աեհաի այս զեղեցիկ կանոնին, ուսուցիչը պարտ է իւր ամենօրեայ գործունեութեան մէջ նկատուած երեսյթները նշանակել։ իսկ ոյդ նկատողութիւնների ուշադիր վերազննութիւնը ձեւնառու կընի ոչ միայն գործի յառաջընթացութեանը, այլև նոյն իսկ ուսուցչանձնական կրթութեանը։ Պատ այսմ ևս իրաւացի է այն խօսքը, թէ մարդս ուսուցանելով ուսանում է։

Ուրեմն մենք խորհուրդ ենք տալիս ուսուցին, մանկավարժօրէն իւր անձը կըրթելու համար, շնորհած իւր պարապմունքների, փորձների, գործի բարեկանը ծառայող զանազան գաղափարների, և իւր սեպհական սիսալմունքների օրագիրներ։ Թա՞ղ այդ տետրակը միշտ մնայ առնելուած և թող չժուղանաց ուսուցիչը որբան կարելի է յանձնալ մուշկ անելու նորան։ Իհարկէ նա որեցօր կըսագործուի։ Կանցնի

մի ամիս, մի քառամսեակ, մի տարի, և թող ուսուցիչը միշտ զննէ տետրակը համեմատէ, ստուգէ իւր հին հայեցուածքները նորերի հետ. և այսպէս խորամուխ լինելով իւր գործի էութեան մէջ, նա մեծամեծ օդուտներ կատանայ, մեծամեծ յառաջադիմութիւններ կանէ անձնակրթութեան մէջ, նա էլ չի վետանալ մի անդամ ընդ միշտ ընդունած ձևերի մէջ, չի կոպտանալ, չի բժամժանալ. նո գիտութեան լուսով կիսոյլցնէ իւր աշխատանքը և կրաքրացնէ հասարակութեան աշքում ոչ միայն ուսումնարանի, այլ և ուսուցչի անունը։ Ուսուցչի անձնազննութեան մասին արդէն խօսել ենք, այժմ մենք կանդ տանունք ուսուցչի ամենօրեայ օրադրութեան այն բովանդակութեան վերայ, որ կարող է սասանալ նա նկատողութեան ենթարկելով աշակերտի անձնառութիւնը և իւր ուսումնատութիւնը ընթացքը։ Ճանաչեցէք ձեր աշակերտին իրեւ անհնառութիւններ։ Ամեն մի ուսուցիչ սովորաբար նշանակում է ցուցակի մէջ աշակերտի անունը, ազգանունը, կոչումը, հասակը, — բայց այս բոլորը գեռ չէ ճանաչեցնում անձնաւորութիւնը. այդ բանը թագնուած է լինում ուսուցիչը, և միայն նկատողութիւններով կարելի է բաց անել։ Ուրեմն ուսուցիչը պարտ է նկատել իւր աշակերտի անձնաւորութեան բոլոր յայնութիւնները և դոցա հետեւանքները, նկատել՝ թէ ի՞նչքան և ի՞նչպէս է ընդունակ նա իմացութիւններն ըմբռունելու, ի՞նչպէս է նորա լիզուն, յիշողութիւնը, սրամտութիւնը, տրամադրութիւնը և այլն։ Ճանանալի է, որ աշակերտը ուսումնարան մանելուց յառաջ

ենթարկած է եղել զանազան արտաքին ազդեցութիւնների, ուրեմն թող ուսուցիչը ջանայ նորա անցեալն էլ զննել, որպէս զի կարելի լինի առաջ դիտենալ այն՝ ինչ որ էայ, ապա թէ այն՝ ինչ որ ուժով էն:

Դանաչեցէք ձեր աշակերտին՝ իրու ընդունեաց անդամի, որտեղ ենթակայ է լինում մանուկը. զանազան ազդեցութիւնների: Այս կողմից նկատողութիւնը բաց է անում ուսուցչի առաջեւ աշակերտի բընաւորութեան, սովորութիւնների և ձրգուումների զաղանիքը: Մանկավարժական յարաբերութեամբ էլ մեծ նշանակութիւն ունի այդ: — Ուսումնարանը պէտք է ազդէ կեանքի վերայ. բայց մի բանի վերայ ազդելու համար հարկաւոր է նախ և առաջ լու ճանաչել սուարկան, որ նորա յատկութիւններին համեմատ կարելի լինի կարգադրել գործի ընթացքն: Այս վերջին յարաբերութեամբ նշանաւոր է իմանալ մինչև անդամ աշակերտների ըդրադրունքը, նոցա ծնողների արհեստը, վերջապէս և այն համոզմունքներն ու նախապաշարմունքները, որոնց հետ պէտք է մարտնչել լուսաւորութիւնը: Աերջապէս ճանաչեցէք աշակերտին ուսումնարանի մէջ նորա գէպի ընկերները, գէպի ուսումն և գէպի ուսուցչին ունեցած յարաբերութիւնների մէջ: Մանկան հասակում գեռես կեզծաւորութիւն չէ լինում և ազտակիրպով դուրս է երեւում մանկան բնաւորութիւնը. խաղերի մէջ կարող էք տեսնել նորա շարժուածը (գեմակերտմինու), աշխատանքի մէջ կարող էք նկատել նորա ունակութիւնը, — այս բոլորն ահաթանկապին իմացութիւններ են այն ու-

սուցչի համար՝ որ ոչ թէ միայն ուսուցանում է, այլ և կրթում է: Բայց մի շերիքանաք տեղեկութիւնները ժաղավելով միայն յիշողութեան մէջ, գորան միշտ չէ կարելի ապաւինել, այնպէս արեք՝ իրերև թէ դուք ամեննեին յիշողութիւն չունիք. — Աշակերտի վերայ արած ձեր բոլոր հետազօտութիւնները, յետոյ մտածեցէք դոցա վերայ, ջանացէք յարմարեցնել ձեր գործունէութիւնը յանձն առած գործներիդ էութեանը հետ, և դուք կահսնէք թէ ի՞նչքան նշանաւոր են այդ տեղեկութիւնները՝ որոնց այնքան յաճախ արհամարհում են ուսուցիչները: Իմացած կենսք, որ դասաւութեան ամեն մի եղանակ, որքան էլ լու լինէր, դարձեալ կարօտ է կտառվելածովածունեան, մի մոռանաք, որ ամեն մի մեթօդ ուսուցիչն ինքը պէտք է յարմարեցնէ իւր գործին: Ուրեմն զրեցէք ամենը՝ ինչ որ ծառայում է սկզբնական ուսումնարանի մեջուն լրագործելու և մշակելու համար:

Աչքաթող չանէք և դիսցիպլինական (կարգապահական) միջոցները՝ դասաւան մէջ օրինաւոր կարգ ու կանոն պահպանելու համար, այս ի՞նչքան մեծակշիռ՝ այնքան էլ դժուար պարտականութիւնն է ուսուցչի: Այդպիսի կերպով փոքր առփոքր կհաւաքուի ձեզանում դաստիարական գործի մէջ մեծ քանակութիւն մանկավարժական նիւթերի, և մի և նոյն ժամանակ ձեր գործերը կզարդացնեն գործի վերայ ունեցած հայեացքներդ, կարողութիւն կտան ձեզ վարուիլ գործի հետ ոչ թէ կրաւորականապէս, ոչ թէ ստրկորէն, այլ կրետիկարար (քննադատօրէն): Եմն մի մեթօդ, ամեն մի եղանակ համե-

մատելով ձեր սեպհական փորձածի ու ստուգածի հետ՝ դուք կարող եք պարզ և զիտակցաբար ցոյց տալ նորա յարմարութիւնը։ Թիւնը կամ անպիտանութիւնը։ Մեր ժամանակում՝ երբ լոյս են ընկած այնքան շատ զանազան և եղանակներ ու մինչեւ մարդս ինքնուրոյն կերպով չաշխատէ ճանաչել և գնահատել նոցա արժանաւորութիւնները, սախալուած կինի աչքերը խփած ձեռնարկել այն եղանակը, որի մասին գուցել շատ են խօսում։ Մեկն դուք է գալիս Մարկոսի մեթօդը, միւսը գովում՝ է Ավրակոսինը, ում ուրեմն լսել, ում հաւատալ։ Կպատասխանեմ, —քեզ, քո անձնական փորձին, քո կրիտիկային։ Մենք աւելորդ ենք համարում մեկնել, թէ ինչպիսի ձեռվ պէտք է նշանակել նկատողութիւնները աետրակի մէջ։ Տը ւելք նորան օրագրութեան կամ յիշատակարանի ձև, այս մի և նոյն է, բայց մի գործէք մեքենայաբար, առանց կենդանի և ջերմ տրամադրութեան դէպի գործը։ Աերը գէպի գործը հրաշքներ է անում դաստիարակութեան մէջ, այդ է միոյն մանկավարժի կատարելութեան նշանը, և ես չեմ ճանաչում մի ուրիշ կենարար սկզբունքը բաց ի սիրուց, ուրեմն թող նորա կենսատու շունչը ջերմացնէ և կենդանացնէ ձեր աշխատանքը։ Ա երջապէս այս էլ ասենք, որ ուսուցչի օրագրութիւնը այն նշանակութիւնն էլ ունի, որ նա հասցնում է զեղեցիկ նիւթեր ուսուցչաւ կան խօսակցուների համար, որոց լինելը ստենացանկալի բան է նոյնպէս անձնակրթութեանը օդնելու համար և որոց մասին մենք կխօսենք հետեւեալ զլխում։

Գ.

Ուսուցչական դասակարգի բոլոր անդամների մշտական կապակցունենը մենք համարում ենք ուսուցչի անձնակրթութիւնը պահպանող և զարգացնող միջոցներից մի ամենազօրի զը։ Վրեմուտքում, և մանաւանդ Գերմանիայում, այս մոքի ծշմարտութիւնը արդէն ճանաչել են ամենքն էլ, և դորա շնորհքովն է որ ամեն տարի սովորաբար լինում են ուսուցչական ժողովներ, հաղորդակցութիւններ, միաբանութիւններ են։

Կարելի է ասել, որ մեր մէջ ոչ մի դասակարգ այնքան բաժան բաժան, այնքան միութիւնից ու կապակցութիւնից հեռու չեն ոչ մի դասակարգ գուցել այնքան կարօտ չեն միութեան՝ որքան ուսուցչականը Մաքերի մշտական փոխանակութիւնը մանկավարժութեան վերաբերմամբ, զանազան վիճելի ու հետաքրքրական խնդիրների միաւորեալ ուժերով լուծումը, դասատուութեան առարկաներն ու եղանակները ուսանելու փոխադարձ զրգիով, փորձերի ու հայեցուածների փոխադարձ սառւգութիւնը, —աշա այն մեծակշիռ օգուտները, որոնցից զրկվում է ուսուցչական դասակարգը առանձին և իրարից անջատ եղած ժամանակութիւնը։ Երբ խօսակցում է մարդս այն անձի հետ՝ որ նուիրուած է լինում մի և նոյն կոչմանը, զուարժանում ու քաջալերվում է։ Խսկ մեր ուսուցիչները ընդհակառակն փակվում են պուճախներում և բոլորովին հեռու կենում հաղորդակցութիւնից։

Խօսակցունենը մտածող ու աշխատող մարդկանց համար այն աղնիւ վայելըու-

թիւններից մինն է, որի մէջ փոխագարձ օգուտը միաւորուած է հանգստութեան հետ։ Ամեն մի խելացի խօսակցութեան նպատակն է, ինչպէս ասոցինք, ի հարկէ մաքերի, դատողութիւնների, հայեացքների փոխանակութիւնը (հազորդակցութիւնը). նա պէտք է լուսաւորէ և լցուցանէ անձնական հայեցուածքները, պէտք է բացատրէ նորանց և ընդարձակէ զանազան կարծիքների ու դատողութիւնների հազորդակցման միջոցով։ ըստ այսօն վենդանի խօսակցութիւնը պարա է և կարող է լինիլ (ինչպէս փորձը ցոյց է տալիս) ուսուցիչների անձնազարդացման և գործունեութեան գրգռող ու շարժող պատճառներից մինը։ Ուսուցչական խօսակցութիւնները խոհական և անհրաժեշտելի պահանջ են նոյն իսկ կեռանքի և այն գործունեութեան համար, որ միաւորում է ուսուցիչներին ի մի նպատակ։ Ապրեորէ միայն, որ ուսուցչական գործունեութեան միութիւնը լինի պառող աղբականացնեան՝ և ոչ հետեւանք արտաքին հարկադրանաց, ուժի և երկիւղի, ասուած համաձայնութիւնը մանկավարժական խօսակցութիւնների էութիւնն է ու խնդիրը։ Կասկած չկայ որ մանկավարժական գործի մէջ անշարժութեանը ունը շատ մեծ չարիք է։ Եթէ որ կեանք ասելով զարդացում պիտի հասկանանք, ապա և անշարժութիւնը կեանքի բացատրութեան միարունի, պատճառ՝ զարդացումն անհնարին է առանց շարժողութեան։ Լաւ է սխալուիլ՝ քան թէ անշարժ լինիլ։ Անշարժութիւնն ամեն մի կատարելազործութեան, ամեն մի զարդացման իրական բացատրութիւնն է։ Բայց ի՞նչն է կարող

ծնուցանել և պաշտպանել ուսուցիչների մէջ մաքի մի այդպիսի շարժողութիւնը, ձգտումը գէպի անձնակատարելութիւն և ձգտումը գէպի իւրսեպհական աշխատանքի բարեոքումը, — եթէ ոչ կենդանի հազորդակցութիւնն այն մի և նոյն ասպարիզի աշխատաւորների մէջ, որոնց կազմեցում են ընդհանուր նպատակը և փոխադարձ շահերը։ Իրար չեն հասկանալ զանազան ասպարիզների մարդիք, բայց ուսուցիչների գործն ու նպատակը նոյնն է։ Մանկավարժական խօսակցութիւնները կարողութիւն են տալիս քննադատել դործը ու թէ լուռ ու մունջ, ինքնիրան, ոչ միայն մտածել ու խօսիլ բարեոքմանց մասին, այլ և իրօք կատարել նորանց, որովհետեւ խօսակիցները կլինին ուսումնարանի աշխատաւորները \*։ Պերջումը մեզ հարկաւոր կլինիր ասել ես, թէ ի՞նչ չետերով կարող էին լինել ուսուցչական ժողովները. բայց մեզ անկարելի է երեւմ այժմ այդ բանը. կզարթնի պահանջը, կլի-

(\*) Գերմանական ուսուցիչների ամենամեայ ժողովներից մէկի մէջ, Ուռովլիշտատում, ուսուցչական խօսակցութիւնների նշանակութեան վերաբերմանը զրուած էին յետազայ մոքերը (տէզիսներ)։

1) Ուսուցիչների յարակը ունեաց իշխանութեան ու նշանակութեանը։

2) Նոքա ջերմեանդացնում են գէպի պարտականութիւնները պաշտօնի մէջ։

3) Զօրացնում են ուսուցչի կրթութիւնը։

4) Միթթարում, հանգատացնում և զօրեղացնում են ողին, տալով ուսուցչին արիութիւն և զուարթութիւն։

5) Այդ տեսակ յարակցութիւնների պակասութիւնն վետոր։

նի կարիքը՝ և կեանքն ինքը ցոյց կասց յարաբերութիւնների այս կամ այն ձեր, ուրոնց տեսականապէս ձեւի տակ զնելը մեզ անտեղի և անժամանակ է երեսւմ։ Մենք միայն այս էլ կնկատենք, որ ժողովրդական ուսուցիչների մերձակցութիւնը ցանկալի է ոչ միայն մանկավարժական, այլև և արևտեսական յարաբերութեամբ։ Բացարենք այս։

Յայանի է, որ ժողովրդական ուսուցչն ունիքը համեմատաբար շատ քիչ է. իսկ երբ կարօտութիւն չկայ նիւթական միջոցների, բնական է որ նա կարող չի լինի բերել տալ զրականական—մանկավարժական հրատարակութիւններ, և առհասարակ հետեւել իւր հայրենիքի մասաւոր կեանուի ընթացքին, սորանից ուղղակի կը ծագի ուսուցչի յետամնացութիւնը, նորա անտարբերութիւնը գեպի հասարակական գործը և կեանքի մէջ պատահող արթնացուցիչ խնդիրներից հեռու լինելու։ Բայց ինչ որ չէ կարելի անել մինակ, այն բանը հեշտ է անել միասին։

Ա) Վատանգաւոր անշարժութիւն։

Բ) Անասակար անձնապատճենութիւն։

Յ) Ուսուցչական խօսակցութիւնների նորոգութիւնի լինի։

Ա) Ուսուցիչներին իրար մօռեցնել։

Բ) Եւրաքանչեւրի փորձով իմացածը ամենքին հաղորդել։

Գ) Մանկավարժական օրինաւոր շարադրութիւններ ձեռք բերել։

Դ) Դէսի ուսումնարանը սէր ու մաներմութիւն պահպանել ու զրեղացնել։

Ե) Ռւանդիկ առարկաների դասատութեան եղանակները դատարկնել՝ թէ տեսականարար և թէ գործնականապէս։

Աւ այսպէս ժողովրդական ուսուցիչների մերձ հազորդակցութիւններն ունին այն բարեկար հետեւանքը, որ քայ ի նոյն դասակարգի միութիւնից և անձնակրթութեան օգուտներից՝ զլուխ կդայ նոցա մէջ անհնաժանդակութիւն անտեսական մաքով։ Իրանց միջոցները միաւորելով ուսուցիչները կարող կին հիմնարկել օժանդակիչ գանձարաններ, հասարակաց գրադարաններ և լին։ Ուսուցանող ոյժերի մի այդ տեսակ ընկերակցութիւնը փրկարար ազգեցութիւն անելով ուսուցիչների նիւթական վիճակի վերայ՝ մի և նոյն ժամանակ կրաքաջնի ամրող ուսուցչական դասակարգի մատուր զարգացման աստիճանն էլ։ Արդ ամենից առաջ եկեք համայնքնեւնը Ձք վեհադարձ վեանեք Ձք, մեր հասարակական յարաբերութիւնների մէջ։ Չեռք տանը մէկ մէկի, փոխադարձարար յարգինք իրար և ձանալչենք ուրիշների իրաւունքը՝ չկորուսանելով մերը։

Վյո պահանջը մեծակշիռ է։ Ինչքան նյաճախ տաղանդաւոր ուսուցիչը արհամարհանքով է նայում իւր առաւել քիչ տաղանդի տէր ընկերի վերայ, կարողաւոր ուսուցիչը բարձրից նայում է չքաւորի վերայ, ինքնարաւականութեամբ մտածելով «Հետեւակը ձիաւորին ինչ ընկեր է»։ Քաղաքի ուսուցիչը բարձր է գասում իրան գիւղի ուսուցից։ Ինչի՞ համար է այս ինքն իրանով յափշտակվելն, ինչի՞ ոյս ուռչիքը, որ թաղցնում է զրսեանց փայլուն փաթեթների պէս մեր ներքին ապականիչ վերքերը։ Ծայլ առնք ուրիշն որ միութիւնն ու համաձայնութիւնը փոխադարձ յարգանք ու բարեկամական պատրաստականութիւնն իրար ծառայելու,

բռնեն մեր կեանքի ոյդ չարիքի՝ այդ խարիսխութեան տեղը։ Թաող մունիւն լինի մեր մէջ ամրող գասակարգի պատիւ պահելու համար։ Պատիւն ամենքի համար թանկագին է։ իսկ ուսուցչի համար նա ամենայն ինչ է։ Այրցրեց նա հաւատարմութիւնը, - կորցրեց ուրի մնամենայն բանն թաող ներս բերէ միութիւնը ուսուցական աշխատաւոր կեանքի մէջ թարմ ըսկըզբունք, ոյժ ու զօրութիւն, որից կախված է ուսումնարանի յառաջազիմութիւնն ու մեր ընդհանուր երջանկութիւնը։

## 17.

Ի՞նչը անունուն ուսուցչի զարգացման ու անձնակրթութեան ընդհանուր միջոցը, պէտք է նորա ու զզակի պարտականութիւնը լինի և մշտական պարագանունքը գասերից ազատ ժամերում։ բայց որովհետեւ շատ անդամ կարդալը սովորութիւն են շինուած շատերը իրրեւ հասարակ զուարձութեան առարկայ, ուստի և շատ նշանաւոր է այս հարցի վճիռը, թէ չ'նշ կարդայ ժողովրդական ուսումնարանի ուսուցիչը, և չ'նշ կարդայ, որ ընթերցանութիւնը իսկապէս նորա համար նիքնակրթութեան միջոց գառնայ։

Այս հարցի վճիռը պայմանաւորվում է ուսուցչի զօրծունեութեան էութեամբը։ Ամենից առաջ ուսուցիչը պէտք է լաւ հասկանայ իւր զօրծի բուն նշանակութիւնը, պարզ ճանաչէ իւր կոչումը թէ նորա ամբողջ շրջանի և թէ այն մասնաւոր ձևերի մէջ, որոնցով նա պիտի իրագործիի։ Աւ արդ կարդացէք ամենից առաջ մանկավարժութեան վերաբերմամբ

բնույթ օրինագույն գործածները։ Այս ընթերցանութիւնը պիտի լինի հանապազօրեալ և մշտական։ Ուսումնասիրեցէք ըստ ամենայնի ձեր զօրծողութեան հիմքերը՝ և ձեր առջև բաց կինին ձեր կոչման ամբողջ փառահեղութիւնն ու խորհրդաւորութիւնը, բաց կինին նորա նպատակամերձ լրագործման գժուարութիւնները, և դուք կսովորէք յաղթահարել նորանց։ Մի մուանոք ընդ այսմ, որ իսկական մանկավարժական կրթութիւն դուք չեք կարող ձեռք բերել երեսանց ու հարեանցի ուսումնասիրութեամբ։ այդ նման կինի մի լայն, բայց ծանծաղ ճահճի, որ կրցամաքի իսկական իմացութեան ճառագյութներից։ ուրի մն նորամուխ եղէք ձեր կարդացածի մէջ և հիմնովին ուսումնասիրեցէք։ Կարդացէք շատ, կարդացէք յաճախ և ուշի ու շով բոլոր այս աշխատասիրութիւնները, որ մանկավարժի համար գանձ են։

Ուսուցչի ընթերցանութեան երկրորդ նշանաւոր առարկան է կարելի եղածին շտփ հիմնովին ուսումնասիրութիւնը այն առաջիւների, որոնք պարտաւոր է նա աւանդել ուսումնարանի մէջ։ Թէեւ ժողովրդական ուսումնարանի մէջ դասաւութիւնը պիտի լինի սկզբնական (տարրական), բայց այս իրաւունք չէ տալիս կարծել, թէ ուսուցչին հարկաւոր չէ իմանալ աւելի բան։ քան թէ ինչ որ պարտ է աւանդել նա աշակերտներին, (իսկ այս պիտի կարծիք քիչ չի պատահել ձեզ լրացնել մեր մէջ)։

Մի միայն առարկայի հիմնովին ուսումնասիրութիւնն է կարողութիւն տալիս ուսուցչին հասկանալ իոհական մեթօգիւ-

քական գասառուութեան գազանիքը։ Զէ  
կարելի կարծել, որ այդ տեսակ ընթերցա-  
նութեան կրթութիւնները հձանձրացնեն  
կամ անպէտք կրթուին։ Այդպիսի կար-  
ծիքը կարելի է տալ միայն թեթև վիճա-  
սանուական գրուածների վերաբերութեամբ։  
Խսկական լրջամիտ գրուածները և գիտ-  
ական հետազօտութիւնները հենց նորա-  
նով են զանազանվում զրականական ուրիշ  
տեսակ թեթև աշխատասիրութիւններից,  
որ նոքու ամեն անգամ ծնուցանում են  
ընթերցողի մէջ նոր գաղափարներ, հաս-  
ցնում են այնպիսի տոքերի՝ որոնց առանց  
դորան գուցե երրեք չժապէին մեր զլիի  
մէջ :

Ա կ րջապէս, նուիրելով իւր ժամանակ  
կի մեծ մասը մանկավարժական զրուած-  
ների ընթերցանութեան, ուսուցիչը բոլո-  
րովին չպէտք է անէ. և առհասորդակ հայե-  
նաշխա-նի-նը, որ հասարակական կեանքի  
արժայայտութիւնն է. և նոյնագէո կարող է  
ձեռնուու լինել նորա առնեակրթութեա-  
նը: «Եկայ ժամանակում ժողովրդի ըս-  
տր դասակարգիրը հրաւիրվաւմ են հասա-  
րակական դործերին մասնակցեւու. միթէ  
ուրիմն ուսուցական դասակարգը բացա-  
ռութիւն պիտի կազմէ՞ այդ բանում: Մենք  
առհասարակ հարկաւոր ենք համարում  
ուսուցչնե հետազօտել ոչ միայն իւր հայ-  
րինիքի, այլ և օտար երկիրների կեանքը:  
Մուռմէ այդմ վճռել, թէ ի՞նչուն կարդոյ  
ժողովրդական ուսուցիչը՝ որ շահաւա-  
լնի նորա համար ընթերցանութիւնը:  
Հայանենք զործի միմիայն զիստոր և էա-  
կան հիմունիքը:

Ըմենից առաջ սկսոք է կանոն գնել,  
կարույր էն, բայց կը հասնի,

Չափաղանց շատ նոր ապաւ որութիւնները խափանում են ընթերցողի ըմբռնողութիւնը և կարսութիւն չեն տալիս լուրջ կերպով քննել ընդունած զազափարները։ Խնդրես որ կերակուրը կարող ենք մարտել այն ժամանակ միայն՝ եթի նա չափաւոր է ընդունված և լու մանրած, իսկ չափաղանց եղած ժամանակը մինչեանգամ խանդարում է մարսողութիւնը, ոյդպէս ել մատոր նիւթը ըմբռնվում և մարմնուորվում է միմիայն չափաւոր ու մշակված կերպով ընդունելիս։ Ի՞նթերցողը բեռնուորում է իւր միտքը՝ եթի ձեռնարկում է միանդամից գանձ մ գերած կարդալու։ Հեղինակին հասկանալու, նորա գաղափարներն իւրացնելու ու մշակելու համար, հարկաւոր է զննել թէ ի՞նչ պէս են հետեւողաբար զարդանալու մըսքերը նորա ամբողջ աշխատափրութեան մէջ։ Իսկ եթէ ընթերցողը կորդալու ժամանակ գրաւուած կիբնիւրիշ նիւթերով, ապա նա կորող չել լինել կենդրոնացնել իւր ուշագրութիւնը կորդացածի վերայ։ Իսկ տառանց սորոն, հասկանալի է, որ ոչինչ շահ չկայ կարդալուց։ “Առբանիւնը յեւ-էլու, . . . ահա իւր կարեսութեամբ երկրորդ կանոնը խմառալի գրուածներից օրինաւոր օգուտ ստանալու համար։ Երբ էք չպետք է չափաղանց յայս գնել յիշողութեան վերայ, նշանագիւլ պէտք է կարդալիս ոյն գաղափարի՝ որը այսպէս կամ այնպէս գրաւել է մեր ու շքը և սահսկել է մեղ մտածել, թէ նորա համար՝ որ ոյն միտքը շատ զործնական է երեցին մեզ և թէ նմա, որ նա կասկածելի կամ ենթագրելի երեսցին է։ Այս մանաւանդի կարեւոր է այն պատճառով՝ որ չէ կարելի միշտ տաձեռն

ունենալ զիրքը, ուրեմն և չէ կարելի հարկաւոր ժամանակն օգուտա քաղել։ Խար առաւել զիստորն այն է, որ այդ ահսակ ընթերցանութիւնը կարող է զարթեցնել ընթերցողի միոքը և ինքնուրոյն դատողութիւնը։ Ըստ անդամ կարող է պատահել, որ ուրիշ ուրիշ զրուտածների մէջ էլ կը հանդիպին ուշադրութեան արժանի մանկավարժական մաքիր, որոնք եթե չդրվին՝ կարող են մոռացուիլ հեշտութեամբ, որովհեաւ հանդիպած են լինում ոչ մանկավարժական զրուտածների մէջ։

Ենթերցանութիւնը կարող է լինիլ ևս առաւել օգտակար՝ երբ կարգացածը խօսակցութեան և փոխադարձ դատողութեան նիւթ կրտանաց. — բայց սորա մասին մենք արդեն խօսել ենք։ Եյժմ մենք կցանկանայինք յետ պահել ուսուցիչներին նորութեամբ յափշակիվելու ց՝ երբ կարգալիս կլինին և նոր և նորագոյն, մեթօդների մասին։ Աչ ամենայն ինչ օր նոր է լու է, և ոչ ամենայն հին վաստ մոքի արժանաւորութիւնը նորանում չէ պարունակվում՝ որ նա պվերջինն, է, այլ նորանում՝ որ լինի ճշմարիս, առաջջառիս։ Եյժ յարաբերութեամբ ինչքան վընաս է անշարժութիւնը՝ աղնքան էլ վնաս է նորաձեռւթեամբ յափշտակիվել։ Ե հարկէ (ըստ Բեկոնի) աճշմարտութիւնը ժամանակի գուստըն է, և նա սաացվում է նորանոր փորձով, պարզվամ է հակածառութիւններով ու վէճերով (այս մըտքով նա բացատութեան զաւակն է). բայց ուսումնաբանի մէջ պիտի մուտ գործէ արդէն ընդհանրապէս ընդունված հաստատական ձեւ։ Ուրեմն ամենայն մի նոր

ձեւ ընդունելիս հարկաւոր է զգոյշ լինել և շրջահայեաց։

Մի կողմից միւս կողմը ընկնել, միշտ փոփոխել սկզբունքն ու եղանակները, ոչ մի բանի վերայ հաստատ կերպով չկանգնել — կնշանակէ յոյսը կարել աջողակ յառաջադիմութիւնից։ Մենք պահանջում ենք յառաջշարժութիւն, մեթօդների կատարելագործութիւն. — այս իւրաքանչիւր ուսուցչի պարտականութիւնն է. բայց մենք ցանկանում ենք լուրջ, խոհական, նպատակամերձ շարժողութիւն, որին կառավարելիս լինի պարզ զիտակիցութիւնը և առողջամիտ քննազատութիւնը։

### Օ.

Վերջապէս ուսուցչի անձնակրթութեան համար ամենամատչելի միջոցներից մինն էլ այն է, որ նա միշտ բարեկարգ պատրաստութեամբ պատրաստվինք, շատ բան պիտի զիտենաս, ինչ է, երեխաններին դաս տալու համար. համալսարան չէ, ճեմարան չէ, որ դասերի պատրաստվիս։ Եւելորդ ջանք է ու ժամանակի կորուստ,։ Յաճախ կպատահիք մեր ու սուցիչներին գտաստուն զնալիս և չիմանալիս թէ, ինչի՞ վերայ և ի՞նչպէս են գնում դաս ասելու։ Դասագիրք կայ բան կայ, ել ի՞նչ մտածեմ։ Կողին և տիսուր մոլորութիւն։ Եյժպիսի հայեացքի այլանդակութիւնը այնքան շօշափելի է, որ խօսք ասել համարեաւ աւելորդ էր, բայց հինց այդպիսի Հակեացքն է, շատ անդամ ծնուցանում ամենամեասակար հետեանք և ուսուցչի մէջ անձնապատանութիւն։ Միմիպն իւր զործը բարւոքելու մշտա-

կան ու հաստատ ցանկութիւնն է կարող փրկել ուսուցչն բժութենից ու անշարժութենից : Ա աւ ուսուցիչը չի հերիքանալ իւրդասաւութեամբ՝ որքան էլ լաւ լինէր նաև չի համարել նորան կատարելագործվածը, քանզի դիտէ նա և համոզված է, որ ամենալաւն էլ կարօտ է կատարելագործութեան : Մանուկներին իրօք լաւ ուսուցանելը առաւել գժուար է քան թէ հասակաւորներին . ինչպէս որ բժշկի համար էլ հեշտ է բժշկել մեծերին՝ քան թէ երեխաներին : Մանկան մէջ դեռ այնքան շատ անցայտ, անձանօթ կողմեր կան, որոնց ճանաչելու համար հարկաւոր է լինում շատ ճարտարութիւն, նրբամտութիւն ու խոր հասկացողութիւն . մի և նոյն յատկութիւնները հարկաւոր են և դասատւութիւնը մանկան ոյժերին ու ընդունակութիւններին յարմարեցնելոյ համար : Եցս պատճառով տարրական մեթօդների գիտութիւնը պէտք է կազմէ ամբողջ տիտակախկայի հիմքը և է նորա գժուարաբոյն մասը : Ուրեմն ոչ միայն կարեոր է դասերի պատրաստվելը, այլ և պարզն ասելով՝ անհնարին է ուսուցանել առանց պատրաստվելու :

Եբդ մի՛ գնաք ուսումնարան անպատրաստ : Հերիք չէ ունենալ ի նկատի դասաւանդութեան ընդհանուր նախադիմը . հարկաւոր է ամեն անգամ նախապէս մըշակել նորա ճանաւորութեանը . հենց այդ տեղ էլ երեւում է ուսուցի հմտութիւնը : Յոյս մի՛ կապէք դիպուածքի վերայ, և ոչ ոգևորութեան . հաւասացէք միայն հաստատուն աշխատանքին, դաստուն մտէք պարզ ճանաչելով ձեր նըստակին ու միջոցները, և դուք կանզնած

կլինիք ուղիղ ճանապարհի վերայ, դուք օրէցօր կկատարելագործէք և ձեր աշխատանքը՝ և յատուկ անձներդ : Եթէ սորահետ միասին դաւը կզրէք ձեր դասատան միջի բոլոր նկատողութիւնները, որի մասին մենք արդէն վերը խօսեցինք, հապագուք արժանի կլինիք այն բարձր հաւատընծայութեանը որ արւում է ուսուցչն, դուք կարող կլինիք բարձրացնել ձեր աշխատանքը ուսուցչական գաղափարի պահանջածին չափի:

Եղէք ուրեմն խելացի և աղնիւ աշխատաւորներ ժողովրդի մէջ լուսաւորութիւն տարածելու ընդարձակ գաշտում, ջանք մի՛ ինեայէք սուրբ գործի համար : Կծագի մեր ժողովրդական ուսումնարանի լաւագոյն ապագայի արելը, և հասարակութիւնը կսկսի յարգանքով նայել ժողովրդական ուսուցչի աշխատանքի վերայ : “Ես շատ քան եմ սպատում կանոնաւոր ժողովրդական ուսումնարանից, ասում է Գերմանացի մանկավարժներից մինը, և ներկայում մենք մինչեւ անգամ հաղիւ կարող ենք գնահատել այն ազգեցութիւնը, որ կարող է ունենալ նա ամբողջ մարդկութեան վերայ : Քայլ ուսումնարանի այդ ապագան, այդ կարող զօրութիւնը ձեր ձեռքին է, աղնիւ ու համեստ մշակներ : Կանգ մի՛ առնեք ուրեմն կէս ճանապարհին, ընթացէք ինքներդ սուած և տարէք դէպի լոյս և յաղթանակ ժողովրդի և հայրենիքի ձեզ յանձնած մեծ գանձը :

Յարդիմներ և Առանձինեւ

Հ. Կոհասնաց.